

17105

Spreegbeit

W. E. B. Spreegbeit

Kaufm. spreit

1920

9(47.920)

4-94



5 OCT 2011

17105

Ա. Պ. Ա. Յ. Ա. Ն.

ԱՆԿԱԽ ԵՒ ՄԻՈՑԵՈՒ
ՀԱՅԱՍՏԱՆ

1920

ՏՊԱՐԱՆ «ՀԱՅՐԵՆԻՔ»

ԲՈՒԺԾՈՅ

493

Վ-94

Ա. Վ. Ա. Յ. Ե. Ա. Ն.

ԱՆԿԱՆԻ ԵՒ ՄԻՒՑԵԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

1920-

ՏՊԱՐԱՆ «ՀԱՅՐԵՆԻՔ»

ԹՈՒՏՈՒ

105/

12 SEP 2013

15931

ՆՐԱՆՑ

Ովքեր Արեւածագը չտեսած լնկան

Հայաստանի Ազատութեան

նախապարհին



ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Երբորդ տարին է ահա, որ զոյուրին ունի Հայաստանի Հանրապետուրինը, իրեւ անկախ պետուրին:

Չատ խռովայոյգ եղաւ այն ովկիանոսը, որով անցաւ հայ ժողովուրդը, մինչեւ որ խարիսխ ձգեց Ազատուրեան նաւահանգիստը: Չատ զոհեր տուեց նա ու շատ տառապէց: Բայց վերջ ի վերջոյ ամեն տաճաշանք կը մոռացուի, երէ արուած նպատակը իրագործուած է: Խոկ հայ ժողովրդի ամենանիքական նպատակը այսօր իրականուրին է: — նա այլ եւս ազատ է:

Հայ ժողովրդի ազատազրական պայքարի պատմուրինը չէ գրւած տակալին: Արտասահմանի լայն հասարակուրեան շաս ֆիչ քան է յայտնի եւ այն փորորկու իրադարձութիւնների մասին, որոնց միջից ծնունդ առաւ Հայաստանի Հանրապետուրինը: Աւելի կատարեալը քողնելով ապագային՝ ներկայ գրքոյնով նպատակ ունիմ տալու ուրագիծը այն դեպքերի, որոնիք անմիջականորեն կապ-

ւած են մեր պետուք եամ կազմակերպուք եամ ինս : Քայլ առ ժայլ ինտելով դէպֆերի ընթացքին՝ և աշխատել եմ ներկայացնել անաշառ պատկերը մեր մաքսումների եւ վախճանական պակումը մեր յուսահատական նիզերի :

Ես զիտեմ՝ ամերիկահայ ընթերցողը չկամենար աւելի երկարաշունչ ու մանրապատում ուսումնասիրուրին կարդալ եւ աւելի խորը բափանցիլ բոլոր այն հանգամանեների մէջ, որոնք վերջին տարիների մեր պատմուք եամ ստուբաւոր ու պայծառ էջերն են կազմում, բայց . . . Հայաստանում ապրող գործչից այդպիսի պահանջ ամենը արդար չէ. դրա համար ո՞չ ժամանակ ունինք, ո՞չ միջոց եւ ո՞չ նեարդեր : Աւելին կանենի վաղը :

Աւերակների ու ժամանակակից ծնունդ առաւ Հայաստանի Հանրապետուքինը : Սեփական արիւնով եւ քրինեով ձեռք քերեց հայ աշխատաւոր ժողովուրդը իր ազատուքինը : Եւ սեփական տքնացան աշխատանով է նա վերաշնուր այսօր իր աւերակ բոյնը : Թո՞ղ ոչ ոք հեռու ապրողներից չհամարձակի նրա երեսին շարտել կշտամքաների ու դժգոհուք եամ խօսի : Հայաստանում ինչ որ արւել է հայաստանցու զիհողուրինեներով է արւած : Եւ ներկայացնելով ժեզ, ամերիկահայ ընթերցող, համաօս պատմուքինը մեր երկրի վերջին ազատազրական մաքսումների, կուզեի, որ դու ակնածանեով ծունկի իշնէիր Հայաստանի նահատակ, բայց հերոս ժողովրդի առջեւ, որ մինչեւ վերջ պողպատի պէս տոկուն մնաց նակատագրի բոլոր հարւածների առջեւ եւ հակառակ բոլոր դաւերի ու չարակամուք եամ, հասաւ իր վըսեմ նպատակին :

I

ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

1918 թւականը յաւէտ անջնջելի կմնայ հայ ժողովրդի յիշովութեան մէջ — այնքա՞ն դասն էր նա եւ արիւնոտ : Յաւէտ յիշատակելի կլինի նաև այն պատճառով, որ այդ թւականին տաժանելի երկունքով ծնւեց Հայաստանի մանուկ հանրապետութիւնը :

Նախընթաց 1917 թ. տարւայ վերջին ամենքի համար այլեւս պարզ էր, որ Ռուսական Մեծ Յեղափոխութիւնը, վերածւելով քաղաքացիական կուտի, իրականին մէջ պիտի հրաժարւէր իր առաջին օրերի նշանաբան ներից եւ ամենից առաջ ուազմաճակատի պաշտպանութեան մաքից : Այս հանգամանքըն ամենածանր կերպով պէտք է անդրադառնար հար հայ ժողովրդի վիճակի վրա, որովհե-

տեւ հակատի լքումը պիտի նշանակէր նաեւ Տաճկահայաստանի դրաւած վայրերից Հրաժարում եւ տաճկահայ մնացորդների բնաջնջում։ Եւ հասկանալի է, որ հայկական շրջաններն ամենուրեք սրամի թրթումով էին հետեւում ռուսական յեղափոխութեան ելեւչներին։

Գերման-բօլեւիկեան բանակցութիւններն ու Բրեստ-Լիտովսկի խայտառակ հաշտութիւնը գերազանցեցին Հայերի ամենամոայլ սպասումներն անգտմ։ Խորհրդային Ռուսաստանը մի կողմից Տաճկահայաստանի անկախութեան օրէնքն էր հրատարակում, միւս կողմից ստորագրում էր մի պայմանագիր, որ ոչ միայն ամրող Տաճկահայաստանը թողնում էր առաջիկներին, այլ զիջում էր նրանց նաեւ Ռուսահայաստանի մէկ կարեւոր մասը։

Ի տես Ռուսաստանի ներքին քայլայումի եւ ռուս բանակի աղէտաւոր բարյալը ման՝ Հայ ժողովուրդը մէկ մտահոգութիւն միայն ունէր — պաշտպանել Տաճկահայաստանի գրաւած մասերը եւ արգելք հանդիսանալ տաճիկների յառաջխաղացման։ Իր ուժերը սակայն շատ էին փոքր ձեան պէս հալչող ռուս զօրքերի տեղը բանելու եւ լայնատարած ճակատը ապահովելու համար։ Այդ էր պատճառը, որ նրա ներկայացուցիչները հարկադրւած եղան զիջելու եւ Անդրկոմիկասեան միւս ժողովուրդների ներկայա-

ցուցիչների հետ համաձայնելու բանակցութիւններ սկսել տաճիկների հետ։ Այդ բանակցութիւնները տեղի ունեցան 1917 թ. վերջերին Երզնկայում, ուր եւ կնքւեց նախնական զինագաղաքար։ Տաճիկները նոյնպէս շատ էին քայլայուած եւ կարիք ունէին շունչ առնելու եւ թուլացած ուժերը հաւաքելու։ Եւ մինչ անդրկոմիկասեան ժողովուրդները զրագւած էին ճառերով ու փոխագարձ վիճերով, տաճիկ հրամանատարութիւնը կարողացաւ զանազան տեղերից բերել մեր սահմանների մօտ թարմ զօրքեր եւ նոր տարւայ սկզբին այլեւս պատերազմական նախաձեռնութիւնն ամրող ջապէս առաւ իր ձեռքը։

Տաճկաստանը մեր դէմ գործում էր երկու ձեւով. մի կողմից նա քրդական եւ թըրքական շարժումներ էր առաջ բերում Տաճկահայաստանի զրաւած վայրերում ու Անդրկոմիկասում եւ թուլացնում էր հակառակորդի զիմապրական կորովը, միւս կողմից Հաշտութեան առաջարկներով տկարացնում էր անդրկոմիկասեան ժողովուրդների կամքը եւ երկարաւակութիւն զցում նրանց մէջ։ Տաճիկների հետ համախորհուրդ ընթանում էին Կոմիկասի թաթար բէկերն ու համիսլամականները, որոնք տաճիկ զօրքի յաջողութիւնները նկատում էին իրենց յաջողութիւն։

Տաճիկ-թաթարական գործակցութեան հետևանքով 1917 թւի վերջին եւ, մանանդ, 1918 թւի առաջին կիսում Անդրկոմ-

կասը վերածւեց ազգամիջեան ընդհարումների եւ անիշխանական սոսկալի քառօփի։ Երեւանի նահանգի 15,000 հայ զինուորները սաղմածակատից հեռու պահելու դիտաւորութեամբ՝ թուրք առաջնորդները ամբողջ նահանգում առաջ բերին ուժեղ շարժումներ։ յորքակւեցին երկաթուղիների, խճուղիների ու կամուրջների վրա եւ ամիսներ շարունակ հայ զինուորութիւնը զրադեցրին թրքական խոսվութիւնները ճնշելով։ Քրդական հրոսակամբ թերթ Տաճկահայաստանում խփում էին հայ վորքաքանակ զօրքերի թիկունքին, թարանում էին պարէնն ու պահեստները, կոտորում էին գաղթականներին եւ, առհաստրակ, անիշխանութիւն էին ստեղծում ամենուրեք։ Անդրկովկասեան երկաթուղին ամիսներ շարունակ կանգ էր առել. Երեւան-Զուլֆա, Թիֆլիս-Բագու գծերը կտրւած էին թուրք խուժանի կողմից, իսկ պատերազմի վայրերից դէպի առուն շատապող նախրի վերածում սուս զօրքը թուրքերի կողմից ենթարկում էր կողոպուտի ու ջարդերի։

Այսպիսի պայմաններում Անդրկովկասեան կենարունական իշխանութիւնը գոյութիւն ունէր համարեա թէ անունով միայն, իսկ ժողովրդական զանգւածների ղեկավարութիւնը դանաւում էր ազգային կամ յեղափոխական մարմինների ձեռքը։ Միայն հայ ժողովրդութիւնը էր ամեն առաջին էր, առաջին հերթին, իշարկէ, տաճիկի եւ գերման գործակալներով։

կատն ամբայնելու եւ ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու. թուրք տարբը պատերազմով չէր հետաքրքրուում կամ, աւելի ճիշտ, շահագրգուած էր շուտ վերջացնելու եւ այն էլ տաճիկների յաջողութեամբ։ Իսկ վրացիները տարւած էին յեղափոխական բառավիճութեամբ եւ Հնարաւորութիւններ էին որոնում անջատ միջոցներով սեփական գոյութիւնը փրկելու, թէեւ արտաքին կեցւածքով ու խօսքով իրենց թունդ կողմնակից էին ցոյց տալիս համտղործակցութեան ու «յեղափոխական ճակատի միութիւնը» պահպանելու։ Ամէնքն էլ ճառում էին միութեան, շահերի ընդհանրութեան մասին, ամենքն էլ անընդհատ ճակատի պաշտպանութեան անհրաժեշտութիւնն էին ընդգծում եւ շեշտում էին տաճկական վտանգը, բայց եւ ո՛չ մէկը գործնական քայլեր չէր առնում։ Բոլորին համակել էր մի տեսակ անկամութիւն, շշմածութիւն։ Անդրկովկասը վեր էր ածւած յեղափոխական մի խառնարանի, որի կենարունը՝ Թիֆլիսը վիստում էր ամեն առաջական արկածական միջուկ ու պղառը ջրում ձուկ որսացողներով եւ, առաջին հերթին, իշարկէ, տաճիկ եւ գերման գործակալներով։

1917 թ. վերջը եւ 1918 թ. սկիզբը հիւանդաղին մի ըջան էր Անդրկովկասի ժողովուրդուների համար։ Բուսական բանապե-

տութեան ճիբաններից աղաւաւած նրանք արբած էին աղաւաւթեամբ և այդ արբեցումի մէջ չէին տեսնում այն արհաւիրքը, որ մօտենում էր իրենց:

Ընդհանուր այս շփոթի մէջ ի զուր էին կորչում հայ ժողովրդի զուշացումները և Հայոց Ազգային Խորհուրդի կոչերն ու «Հրամանները»: Այն էլ պէտք է տաել, որ հայ մտաւրականութիւնն էլ շատ քչով էր տարբերում ուրիշներից: Նա էլ խօսքից դէնը չէր անցնում եւ բաւականանում էր միայն աղմկալից ժողովներով, շառաչուն բանաձեւերով եւ «իրեն Ազգային Խորհրդի տրամարութեան տակ գնենլով»: Նոյն իսկ յատուկ տիպ էր ստեղծել «Մի բաժակ թէյ»երով ուղմանակատը պաշտպանողների: Կոչեր հրատարակողներ, ամեն տեսակ կօմիտէններ, խորհուրդներ, միութիւններ, խըմբեր ու գումարատակներ թիֆլիսում տւելի շատ էին, քանի զօրամասեր ուղմանակատում՝ Վանից մինչեւ Երդնկա: Նոյն իսկ դասալիքների բանի հաւաքումները, անդամ ահարեկումները չկարողացան ուժեղ ցնցում առաջ բերել Երիտասարդութեան սրաւում: Զօգնեց եւ զօրքի ազգայնացումը, ոչ էլ բաղմաթիւ զինուրական միութիւնները իրենց կենարոնական խորհրդով թիֆլիսում: Համեմատաբար զործերը տւելի լաւ էին դուռմարեւմտահայերի զօրամասերում, որոնց

կաղմակերպումը գտնուում էր Աղահովութեան Խորհրդի ձեռքին, իսկ ամբողջ հրամանատարութիւնը այնպէս մի հակատագրական սխալով յանձնւած էր Անդրանիկին, որին հաղձեալ կերպով տրեել էր զառւրեաղղեներալի աստիճան: Եւ փորձը ցոյց տւեց, որ ինչքան անդնահատելի էր հայզուկ Անդրանիկը, այնքան անարժէք զուրբս եկաւ զօրավար Անդրանիկը, մանաւանդ մասնագիտական կրթութիւն պահանջող զինուրական զործերի մէջ: Նա չկարողացաւ լմբունել ժամանակի ոգին ու տրամադրութիւնները, անկարող եղաւ համախմբել իր շուրջ կենդանի, զործոն եւ հայրենիքի բարօրութեանը նիրւած մարդկանցով: Նա իրեն չըջապատեց ունայնութիւններով, առաւ մի զործ, որին պատրաստւած չէր մասնագիտօրէն եւ անկումն անիմուսափելի եղաւ հակառակ իր անձնական խիղախութեան:

Եւ այս հիւանդու, յեղձուցիչ մթնոլորտի մէջ առաւելապէս հայ գիւղացիութիւնն ու աշակերտութիւնն էր արձադանդ տալիս աղղերին եւ շտապում գէպի ճակատ: Հիացումով պէտք է յիշել Գանձակի, թիֆլիսի, Երեւանի եւ ուրիշ վայրերի հարիւրաւը աշակերտներին, որոնք ամենատաժանելի պայմաններում եւ թանկագին զոհեր տալով մասնակցեցին մեր հերոսամարտի ամենայուղիչ գրւագներին:

Բօլշեւիդմը կովկասում, իբրև քաղաքական շարժում, շատ թոյլ էր, բայց կարելի է հաստատ առել, որ բօլշեւիկեան հոգեբանութիւնը, բօլշեւիկեան արտայայտութիւնները շատ էին ուժեղ Անդրկովկասի բոլոր շրջաններում: Եւ ահա այս վիճակում էր, որ էնվէր փաշայի հրամանով տաճիկների կովկասեան բանակի հրամանատար Վէհիր փաշան յունաւարի մէկին առաջարկեց Անդրկովկասեան իշխանութեան հաշտութեան բանակցութիւններ սկսել: Անդրկովկասին ոչինչ չէր մնում, քան այդ առաջարկն ընդունել, բայց քանի որ գեռ չէին խզած իսպառ կապերը Ռուսաստանի հետ, կառավարութիւնը որոշեց նախօրօք խորհրդակցել Ռուսաստանի միւս ինքնավար շրջանների հետ եւ նրանց հետ միասին ձեռնարկել բանակցութիւններ: Այդ մաքով էլ պատասխան արեց Վէհիր փաշային՝ յայտնելով, որ Անդրկովկասի իշխանութիւնը սկզբունքով համաձայն է բանակցելու, բայց պէտք ունի երեք շարաթ ժամանակի Ռուսաստանի ուրիշ ժամանելի հետ հասկացողութեան գալու համար: Արւած բոլոր փորձերը Հիւսիսային կովկասի, Ռւկրայնայի եւ ուրիշների հետ նախական խորհրդակցութիւններ ունենալու անցան ապարդիւն. այդ շրջանների ներքին վիճակը հնարաւորութիւն չէր տալիս արտաքին խնդիրների մասին մտածելու:

Եւ մինչ Անդրկովկասեան իշխանութիւնը զբաղւած էր բանակցութիւնների հարցով, մինչ յեղափոխական կենարուններում հնչում էին անվերջ ճառերը, մինչ ազգային խորհուրդները հրապարակային ժողովներ էին կազմում եւ կոչեր հրատարակում, մինչ հայմտարականութիւնն իրեն «Ազգային Խորհուրդի արամագրութեան տակ» էր դնում, Վէհիր փաշան պատրւակ բռնելով, թէ հայերը խախտում են զինադադարը եւ բռնութիւններ գործ զնում իսլամների վրա, առաջ շարժեց իր վերակազմւած ուժերը՝ յայտարարելով միանգամայն, որ ինքը կանգ չի առնի մինչեւ որ ոռւս զօրքին չհանդիպի: Եւ ահա իրար յետեւից սկսան ընկնել գրաւած վայրերը, յունաւարի 31ին տաճիկները կռւով զրաւեցին Երզնկան. Հայ փոքրաքանակ մարտիկները եւ հազարից աւելի գաղթականներ Մուրատի զեկավարութեամբ տաժանելի պայմաններում եւ ծանր կորուսաներով նահանջեցին գէպի էրզրում: Փետր. 3ին ընկաւ Բարերդ եւ Սեպուհը իր ձիաւորներով թողեց շրջանը: Փետրւարի 11ին տաճիկներն առանց կռւի մտան Տրապիզոն: Այնուհետեւ նւաճեցին Մուշը, Խնուսը, Մանազկերտը, Վանը..

Անկարելի է նկարագրել ահռելիութիւնը այս ողբերգութեան, որին ենթարկեց Երզրունկային մինչեւ Վան տարածւած արեւմը տահայութիւնը: Գաղթը կատարեց շտապ, ձմեռայ գաժան ցրտերին, թանձր ձիւնով

ծածկւած լեռներով ձորերով։ Հայ ժողովը դի բեկորները թափւեցին կովկաս, իսկ վասպուրականցին, հրէշտառը պայմաններում, կուով ճեղքեց թշնամու շղթան և անցաւ դէպի Համատան ու Բաղգադ...

Սկսեց մի աննկարագրելի խուճապ։ Բարոյալքւած զօրքն ու տասնեակ հազարաւոր գաղթականութիւնը խուժեց դէպի թիւկունք։ Մանաւանդ անասելի թշւառ եղաւ վիճակը գաղթականութեան, որ հաղիւ տեղաւորւել էր երկրում ու սկսել վերաշնել ու կարգի բերել իր տնտեսութիւնը, երբ ըստիպւած եղաւ թողնել ամեն ինչ և մերկ ու սովորուկ զաւակները շալիած՝ փախչիլ հայ ըենիքից։ Մեծաթիւ գաղթականների հոսանքը աւելի եւս որեց պարենաւորման տագնապը թիկունքում եւ է՛լ աւելի ուժեղացրեց անիշխանութիւնը։

Այս բոլորի հանդէպ անդրկովկասեան իշխանութիւնը փորձեց վերակազմւել և տաճիկների հետ բանակցութիւններ սկսել. վետրւարի 10ին բացւեց Սէյմը, որ իսկապէս սկիզբն եղաւ Անդրկովկասի անկախութեան, թէեւնա պաշտօնապէս իր կապերը չը խղեց Ռուսաստանից։ Փետրւարի 16ին Սէյմը որոշեց տաճիկների հետ սկսել հաշտութեան բանակցութիւններ հետեւեալ սկզբունքներով.—

1. Սաեղծւած պայմաններում Անդրկ. Սէյմը իրեն համարում է իրաւազօր՝ հաշ-


տութիւն կնքելու Տաճկաստանի հետ։

2. Անդրկ. Սէյմը՝ սկսելով Տաճկաստանի հետ հաշտութեան բանակցութիւններ՝ իրեն նպատակ է դնում կնքել Տաճկաստանի հետ վերջնական հաշտութիւն։

3. Կնքելիք հաշտութեան պայմանագրի հիմքը պէտք է դրւի վերականգնումը այն պետական սահմանի, որ Թուսաստանն ու Տաճկաստանն ունէին 1914 թ. պատերազմը յայտարարելու վայրկեանին։


4. Պատերակութիւնը պէտք է աշխատի ձեռք բերել Արեւելեան Անատօլիայի ժողովուրդների ինքնորոշման իրաւունքը ի մասնաւորի իրաւունքը Տաճկահայաստանի ինքնօրինութեան թուրք պետականութեան սահմաններում։

Հայերի համար առանձնապէս ծանր էր վերջին կետը — թողնել Տաճկահայաստանը «թուրք պետականութեան սահմաններում»։ Սա խորակումն էր մեր ամենանւիրական յոյզերի։ Թողնել Տաճկահայաստանը «թուրք պետականութեան սահմաններում» կնշանակէր հրաժարել Տաճկահայաստանից։ Այդ շատ լաւ էին հասկանում հայ գործիչները, որոնք ոգի ի բոին մաքառում էին այդպիսի դրութեան դէմ և պահանջում էին պայմանների մէջ զնել Տաճկահայաստանի կատարեալ ինքնօրէնութեան ինդեմքտուրայց ամեն ճիշ անցաւ ապարդիւն։ Իդու ըր անցան րժ. 3. Զաւրեանի ճառերը Սէյմի



պատվամաւորների եւ յեղափոխական խորհությունների միացեալ նիստում։ մենք պարտը արածած էինք պատերազմի դաշտում — վա՛յ պարտածին...

Փետրուարի 22ին արդէն Տրապիզոն մեկնեց Անդրկովկասեան։ Մէջմի բազմամարդ պատւիրակութիւնը, որի մէջ մտան բոլոր ազգերի ներկայացուցիչները։ Պատւիրակութեան նախագահն էր վրացի Ս. Զիէնկէլի։ Հայերի կողմից նրա մէջ մտնում էին Ալեք. Խատիսեանն ու Յովհ. Քաջաղնունին եւ իրենց քարտուղար, Ռուբէն Տէր Մինասեանը։ Անդրկովկասեան ժողովուրդները մեծ յոյս ունեին, որ իրենց կը յաջողւի կնքել հաշտութիւն, որն առանձնապէս թանգ էր հայերի համար։ Հայկական շրջաններն իրենց ներկայացուցիչներին հրահանդ էին տեղ ամեն կերպ պաշտպանել Տաճկահայաստանի հարցը, սակայն շատ քիչ բան էին կարողացել անել ամբացնելու համար իրենց պատւիրակութեան գիրքը։ Եւ մինչ Տրապիզոնում տեղի էին ունենում բանակցութիւնները, Վէհիր փաշայի զօրքերը շարունակեցին առաջ խաղալ։ Փետրուարի 27ին ամենախայտառակ ձեւով ընկալ էրզրումը, ուր հաւաքւած էին Անդրանիկի գլխաւորութեամբ 8000 լաւ զինւած զինւորներ, հարիւրից աւելի զոր ծող թնդանօթ, նաեւ անհաշիւ սազմամթերք ու պարէն։



Բ. Յ. ԶԱԿԻՐԵԱՆ

Ահարեկիչ Մարմինը կատարեց դասալիքների ահարեկումներ, որ նոյնպէս զգալի նշանակութիւն ունեցաւ զօրքի կազմակերպման համար: Վերջապէս, Ազգային Խորհուրդն էր, որ մինչ այդ պինդ նստել էր Թիֆլիսում եւ գրեթէ բոլորովին կարւած էր գաւառից, շարժւեց իր տեղից, եւ մարտի 5ին Ազգային Խորհուրդի նախագահ Ա. Ահարոնեան եւ մի քանի անդամներ անցան Ալէքսանդրապոլ, Կարս, Սարիզամիչ ժողովրդի եւ զօրքի արբամագրութիւնը բարձրացնելու նպատակով: Եւ էրզրումից այս կողմ տաճիկներն այլեւս ամեն քայլ զրաւում էին կոխով: Տըրապիզոնի բանակցութիւնները արգելք չեղան պատերազմական զործողութիւնների շարունակելուն, եւ քանի Վեհիր փաշայի զօրքերն առաջ էին անցնում, այնքան անդիջող էր գտնում տաճիկ պատերակութիւնը. մի շարք արխինահեղ կոխուներից յետոյ մարտի 23ին յանձնուեց Սարիզամիչը, իսկ 24ին Տըրապիզոնում տաճիկները ներկայացրին վերջնադիր, որով պահանջում էին 48 ժամւայընթացքում ընդունել Բրէստ-Լիտովսկում պոլեւելիկների հետ կնքած պայմանագիրը եւ մաքրել Կարսի, Արգահանի եւ 0լմիի շրջանները:

Այս վերջնագիրը ահագին իրարանցում առաջ բերեց Անդրկովկասում: Սէյմի նախագահութիւնը Փրակցիաներն ու կառավարութիւնը մարտի 21ին նիստ գումարեցին եւ

II

ԷՐԶՐՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ

էրզրումի անփառունակ անկումն, անշուշտ ամենամոռայլ էջը կարելի է համարել մեր վերջին տարիների ազատագրական գեղեցիումների մէջ: Նա լախտի հարւածի ուժգնութեամբ խիեց բոլորի սրտերին ու մաքերին: Այլեւս պարզ էր, որ Տաճիկահայաստանը կորած է. վասնու սպասնում էր Ռուսահայաստանին: Թէ չ. Յ. Դաշնակցութեան եւ թէ Ազգային Խորհրդի, յատկապէս սրտ կազմած Յասուկ Մարմնի զործ զրած զերազոյն ձիգերը բաւական բոլորացրին տրամադրութիւնը եւ շատացրին ու ամբացրին զօրքը: Թիֆլիսում, Ալէքսանդրապոլում եւ ուրիշ տեղեր

որոշեցին ծայրայեղ զիջողութիւններ անել, անդամ հակառակ պատգամաւորների բողոքին հրաժարվել Արդահանից ու Կարսից, ամեն գնով հաշտութիւնը դլուխ բերելու համար, բայց տաճիկները դրանով չգոհացան եւ պընդեցին իրենց պահանջի վրա: Անդրկովկասեան պատուիրակութիւնը Տրապիզոնում, ճընշըւած պատերազմական անյաջողութիւններից, տրամադիր էր ընդունելու տաճիկների պայմանները, սակայն Սէյմը մարտ 31ի իր պատմական նիստում միարան ու միաձայն ընդունեց հետեւեալ բանաձեւը:

- 1) Յետ կանչել Տրապիզոնից պատգամաւորներին. 2) յայտաբարել երկիրը պատերազմական դրութեան մէջ. 3) կազմել երեք հոգուց բազկացած մարմին — ներքին դործերի, պատերազմի եւ Փինանսների նախարարներից — վարելու պատերազմի գործը. 4) Ուզդել ժողովրդին մի կոչ եւ բացատրել խաղաղութեան բանակցութիւնների ընթացքը ու պատերազմի անհրաժեշտութիւնը. 5) Սէյմի նիստան ընդհատել երկու շաբաթով:

Սիս առաջարկութիւններն ընդունելով՝ Սէյմը մի հրովարտակով գիմում արաւ Անդրբեկիասեան բոլոր ժողովուրդներին, ուրիշ, ի միջի այլոց, ասում էր.

«Մեզնից պահանջում էին նաևաչել Բըրբատ-Լիտօվսկի պայմանագիրը, որ կիմւած է առանց Անդրկովկասի ժողովուրդների գի-



Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

տուրեան: Մեզնից պահանջում էին յանձնել մեր լաւագոյն նաւահանգիստը՝ Բարումը:

Մեզնից պահանջում էին պարագել երեք շրջաններ Կարսի, Արդահանի եւ Բարումի:

Մենք արինք ամեն բան, որպէսզի բանակցութիւնների միջոցով, խաղաղ նաևապարհով հարկադրենք քուրք կառավարութեան երաժարութելու իր պահանջից: Զգունով խաղաղութիւն պահպանելու, մենք համաձայնեցինք մեծ զոհողութիւններ եւ զիջումներ անել: Մենք յայտարարեցինք Թուրքիային, որ պատրաստ ենք գրեթէ ամեն բանում զիշել նրան: Բայց մենք չէինք կարող երաժարութել Բարումից, որ մեր միակ ելքն է դէպի ծովը, միակ նաևապարի կուլտուրական Եւրոպայի հետ հաղորդակցելու համար: Եւ վէճը խաղաղ կերպով լուծելու համար մեր քափած բոլոր ջանիքները ի դերեւ ելան՝ հանդիպելով Թուրքիայի յամառութեան:

Յաւիտենական ստրկութեան օղակը ձըգւած է մեր երկրի բոլոր ժողովուրդների վըզգին: Թո՞ղ, ուրեմն, քշնամու առաջխաղացումը ջախջախուի՛ բաղխելով մեր վիճականութեանը մինչեւ վերջը պաշտպանելու այնան սերունդների արիւնով ներկած մեր երկիրը:

Ամենիվ ի զէ՛ն:
Ամենիվ դէպի՛ նակատ:
Ամենիվ ի պաշտպանութիւն ազատութեան եւ հայրենիքի»:

Որոշումը շատ էր վճռական — շարունակել պատերազմը:

Պատերազմը վարելու նպատակով Սէյմը ընտրեց Անդրկովկասի պաշտպանութեան Գերագոյն խորհուրդ — Ե. Գէգէճկօրի, Խ. Կարճիկեան, Ն. Ռամիչվելի — որին եւ յանձնը լուեց զինւորական դործի ամբողջ զեկավարութիւնը:

Ուսքի ելան բոլոր կուսակցութիւնները: Վրաց սօցիալ-դէմօկրատները, որոնք մինչեւ այդ բաւականանում էին միայն խօսքերով, անցան դործի եւ սկսեցին վրացիներից կամաւոր հաւաքել ու լեցնել վրաց ազգային զօրամասերը: Կրկնապատկեց իր ուժերը Հ. Յ. Դաշնակցութիւնը, որի Արեւելեան եւ Արեւմտեան Բիւրոները հնչեցնելով ահազան գը՝ դէպի կուր հրատիրեցին հայ ժողովուրդը, որ էրզրումի աղետից յետոյ, կարծես, սթափւել էր եւ գերազոյն ճիգ էր լարում թշնամու յառաջխաղացումը կանգնեցնելու: Մի պահ աիրում է ընդհանուր ոգեւորութիւն. զօրահաւաքը հայերի ու վրացիների մէջ անցնում է յաջող: Ամենքի ուշքն ու միտքը կենտրոնանում է ուղմաճակատի վրա: Սակայն այդ որամադրութիւնը շատ կարճ է

տեւում։ ապրիլի մէկին գրեթէ առանց կռւի
ընկնում է Բաթումը...

Բաթումի անկումը, որ տեղի ունեցաւ
էրզրումից աւելի խայտառակ պայմաննե-
րում, ճակատագրական նշանակութիւն ու-
նեցաւ յետագայ գէպքերի զարդացման հա-
մար եւ վճռական փոփոխութիւն առաջ բե-
րեց վրաց ժողովրդի տրամադրութեան մէջ։

Մինչ Թիֆլիսում նոր պատերազմ էին
յայտարարում Տաճկաստանին, հաշտարար
պատերակութիւնը Տրապիզոնում ծանր
գէպքերի ազգեցութեան տակ միաձայնու-
թեամբ գալիս է այն եղբակացութեան, որ
հարկաւոր է ընդունել տաճիկների վերջնա-
գիրը եւ կնքել հաշտութիւն Մարտի 27ին
պատերակութեան նախագահ Ա. Զիէնկէ-
լին յայտնում է տաճիկներին իր համաձայ-
նութիւնը Բրէստ-Լիտօվսկի պայմանագիրն
ընդունելու եւ հետագրում է Բաթումի բեր-
դապետին բերդն առանց կռւի տաճիկներին
յանձնելու մասին։ Ապրիլի 30ին Թիֆլիս
գալով՝ պատերակութիւնը պազ ջուր է ա-
ծում ռազմական տրամադրութեան վրա։
Զիէնկէլին մի քանի օրւայ մէջ համոզում
է իր կուսակիցներին տաճիկների հաշտու-
թեան առաջարկներն ընդունելու եւ պատե-
րազմին վերջ առալու, որով վրաց ժողովուր-
դը, որ դրանից առաջ էլ արգէն համարեա
դուրս էր եկել պատերազմական վիճակից,
բոնում է զուտ տեղական ինքնապաշտպանու-

թեան ուղին։ Պատերազմին հէնց սկզբից հա-
կառակ էր թուրք տարրը, եւ Սէյմի մարտ
31ի նիստում նրա ներկայացուցիչների պա-
տերազմական բանաձեւին միանալ լոկ տակ-
տիկական նշանակութիւն ունէր. թուրք զե-
կավարները միշտ առանձին փափկանկառու-
թիւն էին ցոյց տալիս գէպի տաճիկները եւ
աշխատանք չէին խնայում ինչ զնով էլ լի-
նի պատերազմը վերջացնելու։ Անկեղծ պա-
տերազմող ոյժը փաստօրէն միայն հայերն
էին։

Բաթումի անկումը եւ յետոյ վրացիների
քաղաքականութեան փոփոխութիւնը ծայր
աստիճանի ծանր գրութիւն ստեղծեց հայ
ժողովրդի համար։ Առաջ էլ պատերազմի
գործում համերաշխութիւնը շատ քիչ էր.
ուղմանականի պաշտպանութեան ամբողջ
ծանրութիւնն ընկած էր հայերի վրա, բայց
վրացիներն, ընդհանուր առմամբ, գեռ կանգ
նած էին պատերազմը շարունակելու տեսա-
կտի վրա։ Ա. Զիէնկէլու բռնած քաղաքա-
կան նոր գիծը տրամադօրէն հակառակ հե-
տեւանքների էր հասցնում, եւ հարկաւոր էր
հաշի առնել զրանից րդիսելիք հնարաւորու-
թիւնները։

Հ. Յ. Դաշնակցութեան Արեւելեան Բիւ-
րօի նախաձեռնութեամբ ապրիլի 7-8ին Ա-
մէքսանտրապօլում գումարեց մի խորհրդա-
ժողով, որին մասնակցեցին Ազգային խոր-
հուրդն իր ամբողջ կազմով, Սէյմի հայկա-

կան հատուածը, հաշտութեան պատիրակութեան անդամները, քաղաքական կուսակցութեանց ներկայացուցիչները եւ Երեւանի, Կարսի եւ Ալէքսանտրապօլի հասարակական դործիչներ։ Այն ժամանակ, երբ ժողովում քննութեան էր առնուում հաշտութեան պատրիարկութեան անդամ Յով. Քաջազնունու զեկուցումը, որի մէջ վերջինս աշխատում էր ապացուցանել սեղծւած պայմաններում տաճիկների վերջնագիրն ընդունելու անհըրաժեշտութիւնը, Թիֆլիսից հեռագիր ստացւեց, որ հաղորդում էր, թէ Անդրկովկասեան կառավարութեան թուրք նախարարները վերջնագիր են ներկայացրել՝ պահանջելով ընդունել Բրէստ-Լիտօվսկի պայմանագիրը եւ կնքել հաշտութիւն, այլապէս իրենք եւ Սէյմի թուրք անդամները գուրս կդան Սէյմից ու Կառավարութիւնից եւ կյայտարութիւն Ազրբէջանի անկախութիւն։

Հակառակ այս աեղեկութեան, Ալէքսանտրապօլի խորհրդաժողովը ձայների ճնշիչ մեծամասնութեամբ որոշեց լուլոր միջոցներով շարունակել ինքնապաշտպանողական պատերազմը եւ վերադարձաւ Թիֆլիս, որ հայերի համար սեղծւել էր չափազանց փափուկ գրութիւն։ կամ նրանք պիտի համաձայնէին թուրքերի եւ վրացիների հետ եւ հրաժարւէին ո՛չ միայն Տաճկահայաստանից այլ եւ ամրող Կարսի նահանգից, առանց անդամ երաշխիք ունենալու դէթ յե-

տապայ տաղահովութեան, եւ կամ պիտի մերժէին տաճկական վերջնագիրը։ այն ժամանակ վրացիներն ու թուրքերը անջատ հաշտութիւն պիտի կնքէին, Անդրկովկասի միութիւնը պիտի վերանար, եւ հայ ժողովուրդը պիտի մնար մենակ, կտրւած ամրող աշխարհից, շրջապատած թշնամիներով...

Այսպիսի կացութեան անմիջական հետեւանքը պէտք էր լինէր այն, որ հայերն ու տաճիկները պէտք է թողնէին մենակ, երես երեսի, եւ, ի հարկէ, հայերի վերջնական բնաջնջումն անխուսափելի պիտի լինէր, որպէս ետև նրանց սեփական ուժերը, շատ քիչ էին տաճիկների գրոհի առաջն առնելու, իսկ զրոխից ո՛չ մի աեղջից օգնութեան յոյս չկար:

Այս անհնարին հեռանկարից խուսափելու նպատակով հայկական զեկավարները համակերպեցին վրացիների ու թուրքերի պահանջներին ու համաձայնեցին Անդրկովկասն անկախ յայտարարելու եւ Բրէստ-Լիտօվսկի պայմաններն ընդունելու։ Ապրիլի 9ին Սէյմը յայտարարեց Անդրկովկասն անկախ հանրապետութիւն, Գէղէճկօրիի նախարարութիւնը, որ կողմնակից էր պատերազմը շարունակելու, հրաժարեց եւ կառավարութիւն կազմելլը յանձնեց Ա. Զիէնկէլուն։ Նոր նախարարութեան մէջ մտան նաեւ Ա. Խատիսեանը, Յ. Քաջազնունին եւ Ա. Մահակեանը։

Դեռ նախարարութեան կազմը չամբողջացրած՝ Ա. Զիէնկէլին՝ զինւորական նախարար գեն. Օդեշիլիձէի հետ համախորհուրդ, բոլորից դադանի, հեռազբում է տաճիկ հրամանատարութեան, որ Անդրկովկաս եան կառավարութիւնը համաձայն է ընդունել Բրէստ-Լիտօվսկի պայմանագիրը և վերսկսել հաշտութեան բանակցութիւնները: Ապրիլի 10ին կանգ են առնում զինւորական գործողութիւնները: Դարձեալ ամենքից ծածուկ, Զիէնկէլին հրաման է տալիս բանակի ընդհանուր հրամանատարին ամենակարծ ժամանակում դատարկել Կարսը և առանց կուի յանձնել տաճիկներին: Հայկական կօրպուսի հրամանատար գեն. Նազարբէգեանը և զինւորական կօմիսար Ս. Մանասեանը մի քանի անգամ փորձում են հեռազբով և ուղիղ թելով այդ հրամանի մասին իմացնել Ազգային Խորհրդին ու Սէյմի դաշնակցական ֆրակցիային, բայց երկու օր հեռազբաթելը չի գործում և անհնարին է լինում լուր տալ: Ապրիլի 11ին, երբ Կարսի յանձնումը սկսւած էր, Թիֆլիսում յայտնի է լինում կատարւած գէպքը: Սէյմի դաշնակցական ֆրակցիան իր վճռական վրզովումն ու ըողոքն է յայտնում Զիէնկէլիի արարքի գէմ և կառավարութիւնից յետ կանչում իր նախարարներին:

Կարսի յանձնումը անսահման յուղում ու գրգռում է առաջ բերում հայ ժողովրդի

մէջ: Դաշնակցական նախարարների հրաժարականը պատճառ է դառնում կառավարական տագնապի: Վրաց սօցիալ-դէմօկրատների Փրակցիան, որի անդամն էր Ա. Զիէնկէլին, Ն. Ժօրանիայի եւ ի. Ծէրէթէլիի միջոցով յայտնում է Դաշնակցութեան, թէ երենք եւս անտեղեակ են եղել Զիէնկէլիի քայլին և որ իրենք էլ վրզովւած են ու դատապարտում են նրա արարքը, բայց խընդրում են յետ վերցնել նախարարների հրաժարականը, այլապէս անխուսափելի կը դաւնայ Անդրկովկասի քայքայումը, և վրաստանը ստիպւած կը լինի անկախութիւն յայտարարել և առանձին հաշտութիւն կընքել: Հայերը գժոխսային կացութեան առաջայս անգամ էլ զիջեցին, և հրաժարւած նախարարները ապագայում նման դէպքեր չը կրկնելու մասին որոշ երաշխիքներ ստանալով՝ նորից մտան կառավարութեան մէջ: Հայերը չէին կարող չզիջել, որովհետեւ նըրանց առջեւ միշտ կանգնած էր մենակ մնալու և տաճիկների կողմից կոտորւելու մըղձաւանջը:

ին համարում Բրէստ-Լիտօվսկի պայմանագիրը. Տրապիզոնից յետոյ պատերազմը շարունակւել էր, տաճիկ զինուորի արիւն էր հոսել եւ պահանջում էր նոր հատուցում։ Մայիսի 11ին տաճիկները ներկայացրին նոր՝ անհասելի ծանր պայմաններ։ Նրանք այս անդամ պահանջում էին ոչ միայն Բաթումը եւ Կարսը, այլ եւ Սուրբալուն, Շարուրը, Նախիջևանը, Երեւանի, Էջմիածնի ու Ալէքսանտրապոլի գաւառների մեծ մասը եւ Ալէքսանտրապոլ—Զուլֆա երկաթուղագիծը. դնում էին տնտեսական անօրինակ ծանր պայմաններ։ Բանակցութիւններից պարզեց, որ տաճիկները ոչ մի զիջում չեն անելու, նոյն իսկ գերմանական միջամտութիւններն անդօր էին ազգելու։ Միւս կողմից աղբրէջանցի թուրքերը, որոնց պաշտօնական պատիրակներից զատ Բաթում էր եկել մի բազմամարդ պատգամաւորութիւն եւս Սուլթանօվի գլխաւորութեամբ, պահանջում էին Ղարաբաղը, Զանգեզուրը, Դարալագեազն ու Բասարգէչարը, անդամ Երեւան քաղաքը՝ վեհանձնօրէն հայերին թողնելով Էջմիածինը, իրեւ մայրաքաղաք։ Պարզեց նաեւ, որ վըրաց պատիրակները եւ առաջին հերթին Զընկնկէլին մտահոգւած են գլխաւորապէս Վրաստանի փրկութեամբ եւ վարագոյրի յետեւը ինչ որ առանձին բանակցութիւններ ունին տաճիկների եւ գերմանացիների հետ։ Հայ ժողովրդի ամենաղժբախտ վայրկեանին

III


ՅԱՐՈՒԹԻՒՆ

Ապրիլի 11ին սկսւեց Կարսի յանձնումը տաճիկներին։ Կոստրեց Հայ ժողովրդի մէջ-քը։ Հայ զօրքերը քաշւեցին Ախուրեանի մեռւ ևզերքը։ Սկսւեց մի ահուելի խուճապ ու վախուստ։ Ժողովուրդը թողեց ամեն ինչ եւ կիսամերկ վախսաւ։ Վրա հասաւ աննկարադրելի թշւառութիւն։ Զօրքի գիմադրական թագիւնիւն կաւալու։ Առանձնապէս սաստիկ էր Կարսի կորստեան բարոյական հետեւանքը։

Եւ մինչ դատարկում էր Կարսի նահանգը՝ Զիէնկէլին նոր պատիրակութեան գըլուին անցած, մայիսի 5ին, մեկնեց Բաթում Հաշտութեան նոր բանակցութիւնների համար, բայց տաճիկներն այլեւս բաւական չէ-

Նրա հարեւանները, որոնք աւելի նպաստաւոր պայմաններում էին, լքեցին ու թողին նրան մենակ:

Զարդւած պատերազմի դաշտում, մենակ թողնւած հարեւանների կողմից, անոյժբանակցութիւնների միջոցին, անաւեր ու գաղթական — զարհուրելի էր Հայ ժողովրդի վիճակը, որ աւելի եւս դժոխային դարձաւ մայիսի 15ից յետոյ, երբ, առաջիկները, առանց նախազգուշացման, խախտեցին զինադադարը, յարձակման դիմեցին եւ բաց արին հրացանի եւ թնդանօթի կրակ Ալէքսանտրապօլի վրա, Ախուրեանի ամբողջ երկարութեամբ։ Ազգաբնակութիւնից ո՛վ կարող էր փախչել՝ փախաւ։ Զօրքը յանկարծակի եկած՝ չկարողացաւ ուժեղ դիմագրութիւն ցոյց տալ։ Պատրւակ բռնելով, թէ Զուլֆայի երկաթուղին իրենց հարկաւոր է անգլիացիների գէմ զօրք ուղարկելու համար, առաջիկները գրաւեցին Ալէքսանդրապօլը եւ մայիսի 16ին վերջնադիր տւին գեն։ Նազարեգեանին, որ թոյլ տրւի իրենց երկաթուղով դէպի Զուլֆա զօրք տեղափոխելու։ Անգլիացիներն, ի հարկէ, միայն պատրւակ էին, իսկ իրականութիւնն այն էր, որ տաճիկ փաշանները կամենում էին Աղըրբէջանին զինուրական օգնութիւն Հասցնել յեղախոխական Բագրի ինքնապաշտպանութիւնը ճնշելու նպատակով։ Բագրի հերոսամարտը, Հայ ժողովրդի դիմադրական ողու



Ա. Թ. Ա. Մ.

ամենափայլուն արտայայտութիւններից մէ կը, որ այնքա՞ն թանկագին օժանդակութիւն հասցրեց տաճիկների դէմ պայքարող Հայ բանակին, փաշաների ու խաներին հանդիսացէր տալիս...

Հակառակ գեն. Նազարբէգեանի տւած համաձայնութեան՝ Ալէքսանտրապոլը գրաւելով՝ տաճիկները կանգ չառին, այլ առաջ շարժեցին նաեւ Ալէքսանտրապոլի եւ Երեւանի ուղղաշրջաններում։ Հայ ժողովուրդը յուսահատական կոխւ մղեց, անհաջիւ եւ անմոռանալի գոհեր տւեց, բայց եւ սքանչելի հերոսութիւններ ցուցահանեց այս բոլոր կը-ոխներում Ղարաքիլիսայի ճակատամարտը մայիսի 26ին, Սարտարապատի հերոսամարտը մայիսի 22ին, Բաշ-Արարանը — այդ փայլուն գրւագները հայ զինորի հերոսութեան երբէք չեն մոռացւի Հայոց պատմութեան մէջ։ Այստեղ հայ գիւղացին ու զինուորը ցոյց տւին, թէ ինչ անսպառ կենսունակութիւն եւ անկոտում ոյժ կայ ամբարւածիրենց մէջ։ Արամ, Դրօ, գեն. Սիլիկեան, գեն. Նազարբէգեան, գեն. Ղամազեան եւ ուրիշ շատերը — անուններ են, որոնք ոսկի տառերով անջնջելի կմնան մեր պատմութեան մէջ։ Նրանց կազմակերպական ու զինուորական տաղանդի հետեւանքով էր, որ թշնամին չհամարձակւեց իսպառ աւերակ գարձնել Հայաստանը եւ գէթ մի անկիւն



թողեց ազատ, որ յետոյ կորիշը եղաւ անկախ և միացեալ Հայաստանի:

Այս ժամանակ, երբ Երեւանի եւ Ալէքսանդրապոլի շրջաններում հայ ժողովուրդը մտհւան եւ կեանքի յուստահատական պայքար էր մղում, Թիֆլիսը՝ կարւած դաւարից՝ ծանր տագնապի օրեր էր ապրում: Մանաւանդ սարսափելի էր գրութիւնը արեւմտահայութեան, որ ամեն կողմերից եկել թափել էր Թիֆլիս եւ որի մէկ ծայրը հասել էր արդէն Վլաղիկաւկաղ եւ Արմաւիր: Անկարդ եւ խելակորոյ վախուսար մանաւանդ սաստիացաւ Ալէքսանդրապոլի անկումից յետոյ եւ, մտնաւորակէս, մայիսի 23ին, երբ լուր առարծւեց, թէ տաճիկ զօրքերը Բօրժօմի վրայով շարժւում են զէպի Թիֆլիս: Ահարեկած բազմութիւնները — կին, երեխայ, տղամարդ, զիւղացի, խանութպան, մտաւրական՝ ինքնապաշտպանութեան անտանի կան բնազդից մղած խուժեցին զէպի հիւսիս: Ո՛չ Հայրենակցական միութիւնների կոչք, ո՛չ Ազգային Խորհուրդի զգուշացումները — ոչինչ չօգնեց: Հիւսիսային Կովկաս տեղափոխւեց եւ Արեւմտահայ Խորհուրդը ամրող կազմով, որի հեռանալն աւելի եւս ուժեղացրեց խուճապը: Եւ սրով հետեւ այս վախուսար անկաղմակերպ էր ու տարբերացին, բազմաթիւ զոհեր արւեցին սաղմաղիրական ճանապարհին եւ Հիւսիսային Կովկասում...

Իսկ այն պահուն, երբ տեղի էին ունենում այս զէպքերը, Հայութեան պատիրակութիւնը նստած Բաթումում՝ անդօր էր արագացնելու այս բոլոր աղէտների վախճանը: Տաճիկները կարծես մոռացել էին նրա գոյութիւնը եւ ամբողջ զաժանութեամբ իրականացնում էին հայ ժողովրդի բնաջընջման եւ կովկասը նւաճելու իրենց զիւային ծրագիրը: Եւ միայն Ղարաբիկիսայում ու Սարտարապատում ծանր հարւածներ ստանալուց յետոյ սկսեցին հաշւի առնել հայ զօրքն ու պատուիրակութիւնը:

Մայիսի 26ին տաճիկ պատուիրակութիւնը վերջնադիր ներկայացրեց անդքեզվկասեան պատուիրակութիւնն 72 ժամ միջոց տալով:

Նոյն օրը Աէրմի վերջին նիստում վրաց ժողովրդի անունից ի. ։ Ծէրէթէլին յայտարարեց.

«Վրաց ժողովուրդը մնացել է մենակ. Երանից անջատւել են հայերը եւ կամովին բուրքերը: Անդրկովկասի կեղծ անկախութիւնը խանգարում է Երան պատօրէն վարւել եւ գործադրել լիազօր ուժերը իր անկախութիւնը պաշտպանելու համար:»

Այս հանգամանքներում մեր պարտին է ասել վրաց ժողովրդին. — Դու մնացել ես մենակ, չունիս պետական կազմ, չունիս ո՞ն պատուիրակութիւնը, եւ որքան էլ ծանր լինի

խոստովանել, դու յուսախաբութեամբ ես ապրում. չկան նրանք, չկայ Անդրկովկասի միութիւնը եւ, ուրեմն, երէ ուզում ես փրրկել մեզ, պաշտպանել ոն շահերը, ինչպէս եւ ոն հարեւանների շահերը, պէտք է ունենաս ոն ինքնուրոյն պետական կազմը:

...Դժբախտաբար, գոյութիւն չունի այլեւս անդրկովկասեան միութիւնը եւ փաստօրէն չկայ մի ընդհանուր ներկայացուցչական կենտրոնական օրգան, ուստի Սէյմը պէտք է յայտարարէ, թէ ինքը հրաժարում է իր վրա դրւած լիազօրութիւններից եւ ցըրւի»:

Ի հարկէ, այդպէս էլ պէտք է պատահէր. վրաց գործիչների նախընթաց գործունէութիւնը եւ, մահաւանդ, նրանց ընթացքը վերջին օրերին, յատկապէս Բաթումում, այլեւս կասկածի գուռ չէին թողնում, նրանք որոշել էին անջատել, Վրաստանի անկախութիւն յայտարարել եւ վնասում էին համապատասխան առիթ եւ յարմար ձեւակերպութիւն։ Ինչ որ փափկանկատութեամբ, արագին երեւոյթները փրկելու համար, նըրանք որոնում էին թղենու տերեւ իրենց վարժունքի տղեղ մերկութիւնը ծածկելու համար — իրակլի Ծէրէթէլին դտաւ այդ թղենու տերեւը։

Մայիսի 26ին, կէսօրին, ցըւեց անդրկովկասեան Սէյմը, իսկ մի քանի ժամ յետոյ, միեւնոյն սրահում, վրաց Ազգային Խորհուրդ

դը կատարեց Վրաստանի անկախութեան յայտարարութեան առաջուց պատրաստած ծիսակատարութիւնը։

Եւ նոյն օրը Հ. Յ. Դաշնակցութեան Թիֆլիսի ներկայացուցչական ժողովի, թաղային կօմիտէների անդամների արտակարգ նիստում հանւեց հատեւեալ բանաձեւը.

«Ի նկատի ունենալով այն, որ Անդրկովկասեան Սէյմի ինքնացրումից եւ Վրաստանի կասեան Ազգային ինքնացրումից յետոյ լուծանկախութեան յայտարարելուց յետոյ լուծանկախութիւնը կառավարութիւնը եւ հայ ժողովուրդը մնալու է բախտի բերմունիքին՝ ներկայացուցչական ժողովը գրանում է անիրածեցած, որ Հայոց Ազգային Խորհուրդը ուժեղացնելով իր կազմը՝ անցնի գործ ծելու հայութեան կենտրոնում՝ ստանցնելով կառավարական փունկցիաները, օժտած կիլտատօրական իրաւունքներով հայ կեանդիի բոլոր երեւոյթների եւ գործերի նկատմամբ»։

Դաշնակցական ժողովը շատ ճիշտ էր գնահատել վայրկեանի էութիւնը եւ նախատեսել անելիքը. յետազայ դէպքերը նոյն ուղղութեամբ էլ զարգացան։

Տաճիկների վերջնագերը եւ վրաց անկախութիւնը շփոթութիւն առաջ բերին հայկական շրջաններում։ Հայոց Ազգային Խորհուրդում տիրում էր մաքերի քառու. Դաշնակցութեամբ արագ կատարել էր տաճիկ-



Ա. ՏԱՍԻՒՆԵԱՆ

ների պահանջներն ընդունելուն եւ անհրաժեշտ էր համարում շարունակել ինքնապաշտ պահանութեան կույը։ Հայ Փողովրդական կուսակցութեան ներկայացուցիչները պիտում էին վերջնագիրը ընդունելու վրա։ Սօցիալ-Դէմօկրատներն ու Սօցիալ-Յեղափոխականները ծամծւած բառեր էին թոթովում եւ վախենում էին որոշ կարծիք արտայայտել։

Մայիսի 28ին Բաթումից վերադարձան պատվիրակութեան անդամներ Յ. Քաջաղնունին եւ Ա. Խատիսեանը, որոնց մանրամասն զեկուցումները լսելուց եւ բոլոր հանգամանքները կըուելուց յետոյ յաջորդ օրը Հայոց Ազգային Խորհուրդը Բաթում ուղարկեց յանուկ մի պատվիրակութիւն Ա. Խատիսեանի նախագահութեամբ եւ Յ. Քաջաղնունու ու Մ. Պապաջանեանի անդամակցութեամբ, որոնք յունիս 4ին յանուն Հայաստանի հանրապետութեան, տաճիկների հետ կնքեցին Հաշոտութեան պայմանագիրը, որով ընդունում էր Հայաստանի անկախութիւնը մօտաւորապէս 11,000 քառակուսի վերստարածութեան վրա Սեւանայ լճի շուրջը։

Մինչ վրացիներն ու թուրքերը յայտարարել էին իրենց անկախութիւնը, Հայոց Ազգային Խորհուրդը տատանում էր. այդպիսի զարհութելի պայմաններում անկախութիւնը համարուում էր զառն հեղնակ։ Հայ Ժողովրդի փրկութեան համար ամենքի ոչքը շարունակում էր յառած մնալ հիւսիսին,

թէեւ այդ հիւսիսը վաղուց արդէն խաչ էր քաշէլ հայ ժողովրդի վրա:

Մայիսի 29ին Թիֆլիսում տեղի ունեցաւ չ. Յ. Արեւելեան և Արեւմաեան Բիլօնների, Թիֆլիսի կենտրոնական կօմիտէի և Սէյմի ու Ազգային Խորհուրդի Փրակցիաների արտակարգ նիստը, որտեղ առաջին անգամ որոշեց յայտարարել Հայաստանը անկախ հանրապետութիւն և կազմել կառավարութիւն կօմիտիօն հիմքերով: Իբրև թեկնածու նախարարապետի ընտրուեց Յ. Քաջազնունին: Ազգային Խորհուրդը, մինչեւ օրէնսդրական ժողովի գումարումը, պէտք է մնար իշխանութեան ազրիւր:

Այսուհետեւ այս տեսակէաները դրեթէ առանց փոփոխութեան խրացւեցին և Հայոց Ազգային Խորհուրդի կողմից, որը մայիս 30ին բաց թողեց հետեւեալ յայտարարութիւնը.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Անդրկովկասի բաղաքան ամբողջութեան լուծումով եւ Վրաստաճի ու Աղքաբէջանի անկախութեան հռչակումով ստեղծած նոր դրութեան համելապ Հայոց Ազգային Խորհուրդը իրեն յայտարարում է հայկական գաւառների գերագոյն եւ միակ իշխանութիւն: Որոշ ծանրակշիռ պատճեններով քողնելով մօտիկ օրերում կազմել Հայոց Ազգային կառավարութիւն, Ազգային Խորհուրդը

ժամանակաւրապէս ստանձնում է կառավարական բոլոր փունկցիաները հայկական գաւառների բաղաքան եւ վարչական դեկլը վարելու համար:

ՀԱՅՈՑ ԱԶԳ. ԽՈՐՃՈՒՐԴ

1918 թ. մայիսի 30

Թիվիլիս


Իսկապէս աւելի ճիշտ կլինէր այս յայտարարութեան օրն էլ, այսինքն մայիսի 30 թիվն ընդունել անկախ Հայաստանի գոյութեան սկիզբը, որովհետեւ այս օրւանից մինչեան Ազգային Խորհուրդն ստանձնեց կառավարական բոլոր Փունկցիաները: Թէեւ այն վակէտք է ասել, որ մայիսի 30ին դեռ Ազգ. էլ պէտք է ասել, ընդունել անկախութիւնը: Խորհուրդը չէր ընդունել անկախութիւնը, Ընդհակառակը, Խորհրդի այն նիստում, ուր ընդունեց այս «յայտարարութիւնը», ձայների ճնշիչ մեծամասնութեամբ մերժեց անկախութիւն յայտարարելու առաջարկը: Անկախութիւն յայտարարել Հայոց Ազգային Խորհուրդն չունչով վացատրել Հայոց Ազգային Խորհուրդի այդ վարանումը: Դրա պատճառները երդու էին.

Նախ հայ ժողովրդի համար ստեղծւել էր այնպիսի անելանելի կացութիւն, որ անկախ պետութիւն կազմելը գառն հեղնանք միայն կարող էր թւալ: Երկրի մեծադոյն մասը տաճիկների ոտքի կոխան էր եղել, ժողովուրդը տնտեսապէս եւ Փիղիքապէս ժողովուրդը տնտեսապէս եւ Փիղիքապէս քայլաւած կամ Վրաստան ու Հիւսիսային Կովկաս էր ապաստանել եւ կամ թափւել էր

այն լրաբիկ հողամասը, որ ապագայ Հայաստանի հանրապետութեան հիմքը պիտի դառնար: Ամեն տեղ լաց էր, թշւատութիւն ու խուճապ... Ո՞վ սիրտ ունէր այս պայմաններում անկախութեան մասին մտածելու, ո՞վ պիտի իրականացնէր եւ պաշտպանէր այդ անկախութիւնը:

Երկրորդ Պատմառը հոդեբանական էր. այն ինչ վրացին ու թաթարը շատ հեշտութեամբ իւրացըին անկախութեան դաղափառը, համեմատաբար թեթեւ սրտով բաժանեցին Խուսաստանից, ուռսահայ մտաւորականի համար այդ քայլը մի ծանր ողբերգութիւն էր: Հայ մտաւորականի համար, ըստեղծւած պայմաններում, անկախութիւնը հաւասար էր տաճիկ բանապետութեան վերաբարձին, հայ ժողովրդի նահատակութեան մի նոր շրջանի: Եւ զբանով է բացարբեում, որ Հայոց Ազգային Խորհրդի այն նիստը, ուր քննութեան առնեց «անկախութիւնը», աւելի նման էր սպաւոր տան, ուր ննջեցեալ կայ գլւած...

Յունիսի 4ին տաճիկները պաշտօնապէս ձանաչեցին Հայաստանի անկախութիւնը և ստորագրեց Բաթումի գաշնազիրը, որից յետոյ կազմւեց Հայոց առաջին կառավարութիւնը հետեւեալ անձերից. Նախարարապետ Յ. Քաջազնունի, ներքին գործերի նախարար Արամ, արտաքին գործերի՝ Ա. Խատիսեան, զինւորական՝ գեն. Յ. Հախվերդեան եւ Փի-



ՅՈՎՀ. ՔԱԶԱԳՆՈՒՆԻ

Նանսների՝ Խ. Կարճիկեան։ Յուլիսի 17ին
Ազգային Խորհուրդն ու կառավարութիւնը
Թիֆլուից մեկնեցին Երեւան, որտեղ օ-
դոստոսի 1ին բացւեց Հայաստանի հանրա-
պետութեան առաջին օրէնսդիր ժողովը —
Հայաստանի Խորհուրդը։

Ահա այն փոթորկոտ ճանապարհը, որով
անցաւ հայ ժողովուրդը վերջին խոռվայոյդ
տարւայ ընթացքին, մինչեւ հասաւ անկա-
խութեան։ Անհաշիւ զոհեր տրւեցին, անկա-
րագրելի տանջանքներ բաժին ընկան նրան,
Հայաստան երկիրը վերածւեց լայնածաւալ
որբանոցի ու հիւանդանոցի, ուր ամեն օր
հազարաւոր դիակներ էին թաղւում։ Մի պահ
թւում էր, թէ ամեն ինչ կորածէ եւ այլեւս
չկայ յարութիւն մեռնող երկրին, բայց հայ
ժողովուրը իր սքանչելի կենսունակութեամբ
ինչպէս փխանիկը իր աճիւնից, յարեաւ, նո-
րից ոտքի կանգնեց, ուզդեց իր կորացած մէջ
ըը եւ ժպտուն աչքերով, համարձակ նայեց
աշխարհին —

— Ծագում էր հրաշալի Արշալոյսը Ազա-
տութեան։

IV

ԱՆԿԱԽ ԵՒ ՄԻԱՑԵԱԼ

Շատ համեստ, խորհրդաւոր ու զուսպ
ոլայրմաններում, օգոստոսի մէկին, Երեւա-
նում, տեղի ունեցաւ Հայկական առաջին օ-
րէնսդիր ժողովի Հայաստանի Խորհրդի բա-
ցումը։ Շատերի համար այդ օրը սպահան-
գէս էր թւում, բայց ի վերջոյ նա եղաւ հայ
գէս էր թւում, բայց ի վերջոյ նա եղաւ հայ
ժողովուրդի ամենանւիրական օրերից մէկը։

«Անձեւ քաօս եւ աւերակների կոյտ» —
այս էր վիճակը Հայաստանի։ Ի՞նչ ապրում-
ներ կարող էր ունենալ այսպիսի պայմաննե-
րում կեանք ասնող մի մարմին։ Հայաստանի
Խորհուրդը իր գոյութեան հէնց առաջին օ-
րերից Երեւան հանեց ապրելու այն անսպառ
վճռականութիւնը, որ ամփոփւած է հայ

ժողովրդի մէջ։ Այն ճառերը, որ արտասահմացին առաջին նիստում՝ կողմէուրդի նախագահ Ա. Սահակեանը, եւ երկրորդ նիստում նախարարացէտ Յ. Քաջազնունին, զարմանալի էին իրենց անսահման հաւատով ու կենսաւակութեամբ եւ, իրքեւ այլպիսին, սերունդէ ոերտունդ կմնան թարմ եւ անմռաց։

Երեւանի հասարակական ակումբի գահ-
ի նշում, Խորհրդի անդամների, գերման,
աաճիկ և այլ պետութեանց ներկայացուցիչ
նորի և հասարակութեան խուռն բազմու-
թեան ներկայութեամբ բանալով՝ Խորհրդի
անդքանիկ նիստը՝ Ա. Սահակեանը տապ.

«Քաղաքացիներ, Պատգամանորներ ՀԱՅԱՍՏԱՆԻ Խորհրդի:

Գերազոյն Հայոց Ազգային Խորհրդի կող
մից ես պատիւ ունիմ այսօր բաց ամել անդ-
րասնիկ նիստը Հայաստանի Խորհրդի եւ յայ-
տարարել, որ այսուհետեւ սա է միակ լիա-
զօր մարմինը՝ ամփոփող իր մէջ Հայաստանի
հանրապետութեան պետական իշխանութիւ-
նա:

Այսօր կդանեայ մեզ համար պատմական եւ կբանայ մի նոր լուսաւոր դարաշրջան մեր երիտասարդ պետութեան կեանինում, ինքնուրոյն բաղախական եւ տնտեսական գորգացման:

Այսօր կը մնայ միշտ յիշատակելի եւ
այն պատճառով, որ առաջին անգամ իրա-
կանացած ենք տեսնում մեր նեղ հորիզոնի

տակ գեղեցիկ երազանին ու նվիրական տեսնչը ինիքնորշման, քէեւ անօրինակ դժւարին պայմաններուն:

Ենթադրելով, որ մեր երկրի անկախութեան հարցին շատերը ձեզանից լաւատեղեալ չեն, ես յոյժ կարեւոր եմ գտնում այս բարձր ժողովին ներկայացնել այն փուլերը, որոնցով անցել է սկզբից մինչեւ իր վերջին ձեւակերպումը անկախ պետութիւնների գաղափարը Անդրկովկասում:

Մեր հանրապետութիւնը, ինչպէս եւ
միւսները, հանդէս եկան իբրև անկախ պե-
տութիւններ այն օրից, երբ Անդրկովկաս-
եան Սէյմը լայիսի 26ին իրեն յայտարարեց
կազմակուծած։ Վրաց սօցիալ-դեմոկրատ
ֆրակցիայի նախաձեռնութեամբ եւ առաջար
կութեամբ նոյն օրն իսկ Վրաստանը յայտա-
ռարեց իրեն անկախ։

Անդրոկվկասի ամբողջուրինը փլւելուց
յետոյ մեր երկիրը բռղնած էր իր բաղդին,
ուստի Հայոց Ազգային Խորհուրդը շտապեց
իր վերա վերցնել կառավարութեան բոլոր
ֆունկցիաները:

Հենց այդ ժամանակն էր, որ ստացւեց օսմանեան կառավարութեան բոլորին յայտնի վերջնագիրը նոր հոդային գրաւումների մասին եւ պահանջում էր պատասխան 48 ժամայ ընթացքում։ Գերազոյն Խորհրդի կողմից անմիջապէս առանձին պատկրակութիւններ ուղարկվեց Բաքում յանձինս Յ. Քա-

զագնունու, Մ. Պապաջանեանի եւ Ա. Խատիսեանի, տալով նրանց արտակարգ լիազօրութիւններ բանակցութիւններ Վարելու տանիկ պատմիքակութեան հետ:

Մեր պատմիքակութիւնը յաջողդեցեց որոշ ուղղումներ մտցնել սահմանների մէջ, բայց եւ այնպէս ստիպւած էր ընդունել վերջնագիրը եւ խաղաղութեան դաշինք կընթել Վէհիք փաշայի եւ Խալիլ բէյի հետ։ Այս տեղ առաջին անգամ Հայոց Ազգային Խորհրդի պատգամաւորները պաշտօնապէս նանաչւցին իբրեւ ներկայացուցիչներ անկալս Հայաստանի եւ ստորագրեցին յունիսի 4-ի դաշինքը։

Մեր պետութեան անկախութեան մասին յայտնի է նոյնպէս Տաճկաստանի դաշնակից պետութիւններին, Գերմանիային, Աւստրիային, Բօլգարիային։ Պոլսում մեր երկրորդ պատմիքակութիւնը, որի մէջ մտնում են Ա. Ս.հարունեանը, Ա. Խատիսեանը եւ Մ. Պապաջանեանը, որոնք ուղեւորւել են այնուղի Օսմանեան կառավարութեան իրաւերով, բանակցութիւններ Վարելու Տաճկաստանի եւ նրա դաշնակից պետութիւնների հետ։

Այսպիսով, բազմակողմանի ժննելով մի կողմից, երկրի ուժերը եւ այն հանգամանիները, որոնց մէջ գտնուում է հայ ժողովուրդը եւ միւս կողմից, բաղաքանան եւ տնտեսական ստեղծած դրութիւնը, Հայոց Ազգ. Խորհուրդը սեղմեց իր սիրտը եւ անողոք գի-

տակցութեամբ որոշեց վերջնականապէս ընդունել վերջնագիրը եւ նանաչել Հայաստանի անկախութիւնը, իրեն յանձնելով պատմութեան անաշառ դատաստանին։

Այսպէս, մեր հանրապետութիւնը փոքր է ու նեղ իր սահմաններով. նա զրկւել է իր ամենազնահատելի երկրամասերից ու չի կարող իր մէջ սեղաւորել ամբողջ ազգաքնարդի կութիւնը եւ կարծես թէ պայմաններ չունի անկախ գոյութեան համար։ Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները բարացած չեն կարող մնալ միշտ։ Ես հաւատում եմ, որ մեր սահմանները կ'ընդարձակւեն կեանի երկարէ օրէնքի ոյժով, մեր արդար և անվիճելի իրաւունքների պաշտպանութեամբ զբր բաւուած հողամասերի վերաբերմամբ եւ նոր բարեկամական դաշինքով Տաճկաստանի եւ նրա դաշնակից պետութիւնների հետ, որոնց ներկայացուցիչները ներկայ են այսուղի։ Մենք ընտրել ենք համաձայնութեան իւսադապուր այնին, եւ ուզում եմ յուսալ, որ չենիք սխալուում։

Մինչ այդ մենք կը կատարենք սրբութեամբ եւ անշեղ կերպով մեր այն պարտականութիւնները, որոնք բդիսում են խաղաղութեան դաշինքից։ Թողնենք ապագայ հեռանկարները, յամենայն դէպս այսօր, այս տեղ առանց տատանումների եւ լիակատար վնասանութեամբ մենք գցում ենք խարիսխը մեր պետական նաւի եւ դնում ենք հիմ-

Քը պետական շենքի, ճգտելով միշտ կատարելազործել նրան ի բարօրութիւն Հայաստանի հանրապետութեան բոլոր ազգութիւնների, իբրև զաւակների մէկ հարազատ մայր հայրենիքի»:*)

Նոյն ամուռ հաւատաքով ու լաւատեսութեամբ էր ներշնչած Հայաստանի տռաջին նախարարապետ Յ. Քաջաղնունու կառավարական ձառը:

Յ. ՔԱՋԱՂՆՈՒՆՈՒ ՃԱՌԸ

Բացառիկ ծանր պայմանների մէջ է գործի անցել իմ կազմած կառավարութիւնը: Նա կոչւած է իրականացնելու գործադիր իշխանութիւն մի պետութեան մէջ, որ դեռ նոր է ծնունդ առել եւ տակաւին դուրս չեկել իր կազմակերպման առաջին շրջանից: Կառավարութիւնը չունի ոչ մի յենաբան անցեալում, նա չի յաջորդում նախկին կառավարութեան, շարունակելու արդեն ընթացքի դրած պետական աշխատանքը. նա նոյն իսկ չի ժառանգում կենտրոնական իշխանութեան կարիքներին յարմարեցրած պատրաստի ապարատներ: Նա հարկադրած է սկսելու ամեն բան սկզբից. անձեւ քառօսի եւ աւերակների կոյտից նա պէտք է ըս-

(*) Ճառի վերջին մասը, որ զուտ գործնական նշանակութիւն ունի, դուրս ենք թողնում: Ս. Վ.

տեղծի կենունակ եւ աշխատունակ մի մարմին:

Միւս կողմից կառավարութիւնը գտնում է երկիրը այնպիսի վիճակի մէջ, որի բնորոշման համար մի բառ կայ միայն — կատաստրօֆիկ:

Չորս տարի տեսող պատերազմը, մեծ յեղափոխութիւնը, ոռւսական գօրքերի անկանոն նահանջը մեր սահմաններից, կայսրութեան տարրալուծումը, պատերազմական նակատի վրա կրած մեր պարտութիւնները, տէրիտօրիաներիկորուստը, Անդրկովները, տէրիտօրիաներիկորուստը, Անդրկովների կասի բաժանումը անջատ պետութիւնների — այս խորին ցնցումները չեին կարող ըռողնել իրենց ետեւից ահոելի հետքեր: Տետևական կեանքի ու ֆինանսական դրութեան կատարեալ բայցայում, դադարում ապրանքների արդիւնաբերութեան եւ փոխանակութեան, զինամքերքների ծայր աստիճան պակասութիւն, ամենաանհրաժեշտ առարկաների բացակայութիւն կամ սոսկալի թանգութիւն, ներմուծման բացարձակ ընդհատում, երկաթուղային հաղորդակցութեան դադարում, երբեւեկութեան ուրիշ միջոցների պակասութիւն, ապա հարիւր հազարներով հաշւուղ անսուն եւ անսնունդ գաղթականութիւն, անսպահով կացութիւն սահմանների վրա եւ որպէս անխուսափելի հետեւանք այս բոլորի — անիշխանութիւն: Ահա քէ ինչպիսի ծամր պայմանների մէջ

կանչւել է աշխատանիքի իմ կառավարութիւնը:

Այս բացառիկ դրութիւնը նախորոշում է արդէն կառավարութեան բնոյքը: Նա չի կարող ազտել բազմակողմանի ու լրիւ գործունելութեան, չի կարող ունենալ լայն ծրագիր եւ սահմանափակւելու է ամենաանհրաժեշտ ու միանգամայն անյետաձգելի խընդիրներով:

Կասեցնել քայլայման պրօցեսը, հանել երկիրը անիշխանութեան վիճակից ու ստեղծել պետական շինարարութեան համար պայմաններ — ահա թէ ինչպէս է ըմբռնում իր կոչումը ներկայ կառավարութիւնը:

Համաձայն սրան, կառավարութիւնը դնելու է լուծման հետեւեալ խնդիրները.

Ա. ՆԵՐԲԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

1. Հաստատել երկրում տարրական իրաւակագ, կեանքի ու գոյքի ապահովութիւն:

2. Բանալ հաղորդակցութեան նաևապարհները անարգել երթեւեկութեան համար:

3. Վերականգնել պօստ-հեռագրական նօրմալ հաղորդակցութիւն թէ երկրի մէջ եւ թէ հարեւան պետութիւնների հետ:

4.. Եռանդուն միջոցների դիմել կարելոյն չափ մեղմացնելու պարենաւորման տագնապը:

5. Տեօրինել գաղթ-ականների եւ փախըստականների վիճակը, մասամբ վերադարձնել իրենց տեղերը, մասամբ տեղաորել նոր վայրերում:

6. Նախապատրաստել Հայաստանի սահմանադիր ժողովը հաւաքումը կարելոյն չափով շուտ:

Բ. ԳԻՒԱՆՍՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

Հող պատրաստել սեփական դրամական սիստեմի հիմքը դնելու համար: Զենոնարկել անհրաժեշտ միջոցներ, որպէսզի երկիրը ապահովի դրամական նշաններով, վերականգնի արդիւնաբերական կեանքը եւ ապրանիների փոխանակութիւնը, ինչպէս նաև մըշակվի հարկերի առողջ սիստեմ:

Գ. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

Յարմարեցնել դատարանը երկրի քաղաքացիական իրաւական սովորոյթների պայմաններին, միաժամանակ մասնակից անելով քրեական դատավարութեանը ժողովրդի ներկայացուցիչներին:

Դ. ԶԻՒԽՈՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ

Վերակազմել երկրի զինուրական ոյժերը, նպատակ ունենալով ստեղծել թւով ոչ մեծ, բայց ոգով ու կարգապահութեամբ ուժեղ բանակ:

Ե. ԱՐՏԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՍՍՀՄԱՆՆԵՐՈՒՄ

1. Ամբացնել օսմանեան կառավարութեան հետ հաշտութիւնը եւ բարի դրացիական յարաքերութիւններ հաստատել նրա հետ։ Խատիւ կատարել այն քոլորպարտականութիւնները, որ մենի յանձն են առել օսմանեան կայսրութեան հանդէպ ու հետեւել, որ օսմանեան կառավարութիւնը իր կողմից անի նոյնը մեր վերաբերմամբ։

Մասնաւրապէս լուծել օսմանեան գորքերի մեր երկրից դուրս քերելու հարցը եւ գաղրականների վերադարձ։

2. Աղքարէջանի եւ Վրաստանի հետ փոխադարձ համաձայնութեան գալով, լուծել Հայաստանի եւ այլ պետութիւնների սահմանների հարցը, իիմք ունենալով ազգագրական սկզբունքը, իբրեւ միակը, որ համապատասխանում է ռամկավար պետութիւնների ոգուն ու նպատակներին։

3. Լիկիդացիայի ենթարկել, համայնաւորեան գալով Աղքարէջանի եւ Վրաստանի հետ, ընդհանուր հիմնարկութիւնները եւ գոյքը, որ մնացել են Անդրկովկասեան հանրապետութիւնից։

Այս է կառավարութեան ծրագիրը։ Սա կարելի է ամւանել պետութեան գոյութիւնը սնպահովող ամենանիրածեցու գրաւականների ծրագիր։ Պարզ է, որ նա չի ընդգրկում երկրի բազմազան կարիքները իրենց ամբողջութեան մեջ ընդունելու համար։

Չուրեամբ, որ նրա սահմաններից դուրս մընում են մի շարք շատ կարեւոր եւ արդէն հասունացած խնդիրներ։ Բայց կառավարութիւնը չի դնում հերթի այդ խնդիրները, որովհետեւ նրանց լուծումը այսօրւայ պայմանների մէջ համարու մէ անկարելի։ Կառավարութիւնը չի ուզում սխալանքների մէջ զցել երկիրը լայն հեռանկարներով եւ անիրազործելի խոստումներով, չի ուզում վերցընել իր վրա պարտականութիւններ, որոնց կատարումը վեր է իր ուժերից։ Կառավարութիւնը համոզւած է, որ իր առաջադրած ծրագիրը մասխմումն է այսօրւայ հնարաւորութեան։ Կառավարութիւնը լարելու է իր ամբողջ ոյժն ու կարողութիւնը այդ մասխմումին հասնելու եւ յոյս ունի յաջողութեամբ լուծելու դրւած խնդիրների գոնիկ մի մասը, երբ է իր կողմն ունենայ խորհրդի անվերապահ վստահութիւնը ու գործօն աջակցութիւնը։

Եւ Խորհուրդն ու կառավարութիւնը անցան գործի։ Բառի իսկական առումով «անձեւ քառուից եւ աւերակների կոյտից» երկիրը հետզհետէ սկսեց ձեւ ու կերպարանք ընդունել։ Հազիւ չորս ամիս անցած արդէն «կեանքի երկաթէ օրէնքի ոյժով» տաճիկները հեռացան Կովկասեան Հայաստանի սահմաններից։ Կարսի եւ Նախիջևանի շրջանները նորից միացան մայր երկրին։ Տաճիկների եւ զերմանացիների տեղը Անդրկովկասում բըռ-

նեցին անդլիացիները։ Հեռաւոր Ամերիկայից հասաւ հացը, եւ սովից ու համաձարակից կոտորւող ժողովուրդը թեթև շունչքաշեց։

Անցնելով անհաշիւ գառնութիւնների, վշտիու զրկանքների բովով՝ նա հետզհետէ ամբափնդեց այնքան, որ այլեւս համարձակիարող էր կանգնել քաղաքական տապարէդում եւ իր խօսքը ասել աշխարհին։

1919 թ. մայիսի 28ին Հայաստանի սահմաններում ապրող արեւմտահայ եւ արեւելահայ ժողովրդի անյոզդողդ կամքով տառչին անդամ եւ պաշտօնապէս յայտարարւեց Հայաստանի անկախութիւնը եւ երկու հատածների միութիւնը, որ աննկարագրելի խանդավառութիւն առաջ բերեց ի տիւռու աշխարհի ցրւած հայ ժողովրդի մէջ։ Այս յայտարարութիւնն է իսկապէս այն վայրկանը, որից Հայաստանի հանրապետութիւնը սկսեց գոյութիւն ունենալ եւ իրաւարանօրէն, մինչեւ այդ անկախութեան համար ամենակարեւոր հանգամանքը — ժողովրդի կամարտայայտութիւնը պահառամ էր։ Այդ օրւանից սկսած Անկախ եւ Միացեալ Հայաստան գաղափարը միս ու արիւն ստացաւ եւ սեփականութիւն գարձաւ բոլոր հոսանքների եւ կուսակցութիւնների, որոնք կանգնած են Հայաստանի անկախութեան տեսակէտի վրայ։

Մայիսի 28ի օրը ամենանշանաւոր օրերից մէկն է մեր նորագոյն պատմութեան մէջ։ Նոյնքան եւ աւելի նշանաւոր, որքան է օդ։ 1-ը։ Մինչդեռ օդոս, մէկը սկսեց ընդհանուր աղէտի շրջանում, գորշ տրամագրութեամբ ու կասկածներով, մայիսի 28ը ցընծութեան եւ ընդհանուր ոգեւորութեան օր էր։ Ամենամեծ եւ ժողովրդական անխառն էր։ Ամենամեծ այդ օրը ո՛չ միայն մայրաճւանքով տօնւեց այդ օրը ո՛չ միայն մայրագաղաքում, այլ եւ երկրի բոլոր կողմերում։ Հայաստանի Խորհուրդը լրացւեց 12 տաճկահայ պատգամաւորներով, եւ այդպիսով Հայաստանի երկու հատածների միութիւնը գաղարեց լոկ գաղափարը լինելուց եւ դարձաւ իրականութիւն։ Կառավարութիւնը ժողովրդին ուղղեց պատմական մի հրովարտակ, որ առաջ ենք բերում ամբողջութեամբ։

«Հայաստանի ամբողջութիւնը վերականգնելու եւ ժողովրդի լիակատար ազատութիւնն ու բարգաւահումն ապահովելու համար Հայաստանի կառավարութիւնը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի եւ ցանկութեան, յայտարարումէ, որ այսօրւանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջնապէս միացած են իբրեւ անկախ պետական միաւթիւն։»

Ուղիղ մի տարի առաջ ոուսահայերի համագումարից ընտրւած Հայոց Ազգային Խորհուրդը յայտարարեց իրեն Անդրկովկաս

եան հայկական գաւառների բարձրագոյն իշխանութիւնն: Ազգային Խորհրդի կազմած կառավարութիւնն այդ ժաղաքական ակտի մասին պաշտօնապէս պետութեանց ներկայացուցիչներին յայտնելուց յետոյ, այս մի տարւայ մէջ փաստօրէն հաստատել է իր իշխանութիւնն անդրկովկասի հայկական գաւառներում:

1919 թ. փետրվար ամսին Երեւան ժաղովում կայացած Արևելմտահայ Երկրորդ Համագումարը հանդիսաւոր կերպով յայտարարեց, որ նա Հայաստանը միացեալ եւ անկախ է հանաչում:

Այժմ, Անդրկովկասում եւ Օսմանեան կայսրութեան սահմաններում գտնւած պապենական հայկական Երկիրների միացման եւ անկախութեան այս ակտը կատարելով՝ Հայաստանի կառավարութիւնը յայտարարում է, որ միացեալ Հայաստանի պետական մենակ է Թամկավար Հանրապետութիւն եւ որ ինքը հանդիսանում է միացեալ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնը:

Այսպիսով, ներկայումս Հայաստանի ժողովուրդն է իր ամրողացած հայրենիքի գերագոյն տէրն ու տնօրէնը, եւ Հայաստանի Պարլամենտն ու կառավարութիւնը հանդիսանում են միացեալ Հայաստանի ազատ ժողովուրդը շաղկապող բարձրագոյն օրէնսդիր եւ գործադիր իշխանութիւնը:

Հայաստանի կառավարութիւնը սոյն ակտը հրատարակում է 1919 թ. Ապրիլի 27-ին Պարլամենտի որոշմամբ կառավարութեանը տրւած յատուկ լիազօրութիւնների հիման վրա:

Նախարարների Խորհրդի Նախագահի եւ Արտաժին գործերի նախարարի պաշտօնակատար
Ա. Խ. Տ. Խ. Տ. Խ. Տ. Խ.

Ներքին գործերի նախարարի պաշտօնակատար
Ս. Մ. Ա. Ա. Ա. Ա. Ա.

Զինվորական նախարար Գեներալ-Մայոր
Ք. Ա. Ր. Ա. Ռ. Ա. Տ. Ե. Ա. Ն.

Արդարադատութեան նախարարի պաշտօնակատար Յ. Զ. Մ. Շ. Կ. Ե. Ա. Ն.

Հանրային Կրթութեան նախարար
Գ. Մ. Ե. Ի. Բ. Պ. Ա. Ր. Ա. Գ. Օ. Զ. Ե. Ա. Ն.

Խնամատներութեան նախարար
Ս. Թ. Ո. Ր. Ո. Ս. Ե. Ա. Ն.

Պարենաւորման նախարար
Ք. Վ. Ե. Բ. Մ. Խ. Շ. Ե. Ա. Ն.

Ֆինանսների նախարարի պաշտօնակատար
Գ. Զ. Ա. Ղ. Ե. Թ. Ե. Ա. Ն.

Գործերի կառավարիչ Գ. Խ. Տ. Խ. Տ. Խ. Տ. Խ.

1918 թ. Մայիսի 28ին, Երեւան ժաղաք:

Այս ակտով փակւում է Հայաստանի Հանրապետութեան պատմութեան առաջին շրջանը եւ այնուհետեւ գալիս է մի նոր ըլքածնն, Երբ քայլ առ քայլ, յամառ աշխատանքով ամրացնում են հիմքերը պետութեան եւ

ջնջւում են սահմաններն ու հատուածային
նշանները հայ ժողովրդի սրտում։ Հայաս-
տանի պարլամենտը, որ ընտրւեց Հայաս-
տանում ապրող բոլոր քաղաքացիներից ան-
խտիր եւ որ կեանքի կոչւեց նոյն թւի օդոստ-
մէկին, վերջնական նորագործումը եղաւ
մայիսի 28ի ակտի։

Զկան այլեւս բանաւորի ձեռքով դժւած
սահմանները, չկան տաճկահայեր եւ ոռւսա-
հայեր — կայ Անկախ եւ Միացեալ Հայաս-
տանի ժողովրդավար հանրապետութիւնը
միայն՝ իր ազատ եւ հաւասար քաղաքացի-
ներով։





NL0422456

Հայաստանի Ազգային գրադարան

